ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2020/116, 18.11.2020թ.

Բողոք բերող անձ՝ «Վանդիստ» ՍՊԸ

Պատվիրատու՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/20» գնանշման հարցում

Գնման առարկան՝ համակարգիչներ և պատճենահանող սարքավորումների ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝ Գնահատող հանձնաժողովին պարտավորեցնել ընդունել/գնահատել բավարար «Վանդիստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և/ կամ անվավեր ճանաչել 06.11.2020թ.-ի գնահատման հանձնաժողովի թիվ 2.1 արձանագրությունը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ

Լ.Օհանյանին

Ք.Երևան, Կոմիտաս 54 բ,

Հեռ 37411289326

Էլ փոստ gbqa_ohanyan@mail.ru

Բողոքը ներկայացրած անձի անվանում	«ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ի տնօրեն Վան Մուրադյան Անձնագիր AT0508590 24.06.2020թ.-ին 011-ի կողմից 099522079, van@vd.am Բանկ -Ինեկոբանկ ՓԲԸ h/h 2050022265091001 ՀՀ ք, Երևան, Նալբանդյան 17
Պատվիրատուի անվանումը և հասցեն	*«ՀԱԷԿ» ՓԲԸ ՀՀ,* *Արմավիրի մարզ, ք.Մեծամոր ,* գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Հռիփսիմե Ռամազյան Հեռ. +374 10 20 04 91
Բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան.	ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/20 , ՀԱԷԿ» ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՃԵՆԱՀԱՆՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ԲՈՂՈՔ

Գնահատող հանձնաժողովի 06 /11/2020թ նիստի թիվ 2.1 արձանագրությունն անվավեր ճանաչելու վերաբերյալ

ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/20 ԾԱԾԿԱԳՐՈՎ ,«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար համակարգիչների եվ պատճենահանող սարքավորումների գնման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցելու համար՝ հայտ է ներկայացրել «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04/11/2020թ. տեղի ունեցած նիստի թիվ N2 արձանագրության 6-րդ կետի համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ: Նշված անհամապատասխանությունների մասին ծանուցվել ենք 04/11/2020թ, միևնույն ժամանակ առաջարկվել է շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ սահմանելով մեկօրյա ժամկետ:

«ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ն ծանուցման հաջորդ օրը 05/11/2020թ վերացրել է նշված անհամապատասխանությունները և ուղարկել պատվիրատուին:շտկված հայտը:

Սակայն գնահատող հանձնաժողովի՝ 06.11.2020թ.-ի թիվ 2.1արձանագրության համապատասխան «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ի հայտը գնահատել է անբավարար և մերժել՝ պատճառաբանելով, որ «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ն ուշ է ուղարկել հայտը, քանի որ հայտի ներկայացման ժամկետը լրացել է 05/11/2020թ ժամը՝ 16:30:

Այսպիսով, չընդունելով հայտն այն դեպքում, երբ «Վանդիստ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում իրականացրել է իր վրա դրված պարտականությունները հակասում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետների հաշվարկին, մասնավորապես՝ նշված օրենսգրքի 115-116-րդ հոդվածներին, ինչպես նաև ՀՀ Կառավարության 2017թ թիվ 524-Ն որոշման 41 կետի պահանջներին:

Գտնում ենք, որ «Վանդիստ ՍՊԸ»-ն սահմանված մեկօրյա ժամկետում ներկայացրել է հայտի շտկված տարբերակը և հետևաբար այն չէր կարող ուշ ներկայացված լինելու հանգամանքով պայմանավորված գնահատվել անբավարար:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներով՝

Խնդրում ենք

Գնահատող հանձնաժողովին պարտավորեցնել ընդունել/ գնահատել բավարար Վանդիստ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և/ կամ անվավեր ճանաչել 06.11.2020թ.-ի գնահատման հանձնաժողովի թիվ 2.1արձանագրությունը

<u>Կից ներկայացվում են</u>

1. Վան Մուրադյանի անձնագրի պատճենը
2. Վանդիստ ՍՊԸ-ը պետական ռեգիստրի պատճենը
3. Բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը:
4. Գնահատման հանձնաժողովի թիվ 2.1արձանագրության պատճենը:

«ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Վ.Մուրադյան

Digitally signed by MURADYAN VAN 3105840125
Date: 2020.11.16 11:05:09 GMT+04:00

16.11.2020թ